МИНИСТЕРСТВО ТЕРРИТОРИАЛЬНОГО УПРАВЛЕНИЯ И ИНФРАСТРУКТУР РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЗАО "ВЫСОКОВОЛЬТНЫЕ ЭЛЕКТРОСЕТИ"
ГЕНЕРАЛЬНЫЙ ДИРЕКТОР

MINISTRY OF TERRITORIAL ADMINISTRATION AND INFRASTRUCTURES OF THE REPUBLIC OF ARMENIA
"HIGH VOLTAGE ELECTRIC NETWORKS" CJSC
GENERAL DIRECTOR

0084 Армения, Ереван, ул. З. Андраника 1
Тел. 060 38 00 01

0084 Armenia, Z. Andranik st.1, Yerevan
Tel: 060 38 00 01

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ
0084, Հայաստան, Երևան, Զ. Անդրանիկի 1,
Հեռ. 060 38 00 01
Էլ. հասցե: hven@hven.am, www.hven.am

No. 04/3509-2025
«07» 07 2025թ.

«ՎԵԳԱՍ ՄՈԹՈՐՍ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ ԺՈՐԱ ԱՂԱՍՅԱՆԻՆ
Էլ. փոստ՝ vegasmotors48@gmail.com

Հարգելի պարոն Աղասյան

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով 2025 թվականի հունվարի 29-ին հայտարարվել է «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-25/01» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ): Ընթացակարգի արդյունքում նվազագույն գնային առաջարկ ներկայացրած «ՎԵԳԱՍ ՄՈԹՈՐՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Կատարող) հետ 2025 թվականի մարտի 10-ին կնքվել է ծառայության մատուցման «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-25/01» ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Հաշվի առնելով Կատարողի կողմից Ընթացակարգի արդյունքում ներկայացված դիմում-հայտարարության մեջ նշված պաշտոնական «vegasmotors48@gmail.com» էլեկտրոնային փոստից 2025 թվականի հուլիսի 1-ին ստացված Մ-4793-2025 գրությունն այն մասին, որ ֆինանսական խնդիրներից ելնելով Կատարողը չի կարող իրականացնել Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված N 1-ով (տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց) սահմանված ծառայության պատշաճ մատուցումը, Պատվիրատուն, ղեկավարվելով Պայմանագրի 2.1.3 և 7.9 կետերով, միակողմանի լուծում է Կատարողի հետ 2025 թվականի մարտի 10-ին կնքված «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-25/01» ծածկագրով Պայմանագիրը բոլոր 1-3-րդ չափաբաժինների մասով, որի մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

Տեղեկացնում եմ, որ եթե լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ Կատարողը վճարում է պայմանագրի և որակավորման ապահովման գումարները (ընդ որում որակավորման ապահովումը գանձվում է պայմանագրի չկատարված մասի նկատմանբ), ապա Պատվիրատուն Կատարողին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին: Հակառակ դեպքում կկիրառվեն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետով նախատեսված դրույթները:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ – ԳԼԽԱՎՈՐ ՃԱՐՏԱՐԱԳԵՏԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ, ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԱՐԱՄ ԱՍԱՏՐՅԱՆ

Կատարող՝ ծրագրերի իրականավման ծառայության գնումների
կազմակերպման բաժնի առաջատար մասնագետ
Սիրանուշ Հարությունյան, հեռ. 060380040